



News Release

28 օգոստոսի, 2020թ.

## **Հայ օգնության ֆոնդը և HSBC Հայաստանը հատկացրել են 14.5 միլիոն ՀՀ դրամ Տավուշի մարզում ձեռնարկատիրական գործունեությունը խթանելու նպատակով**

Օգոստոսի 4-ին մեկնարկեց Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) և «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC Հայաստան) կողմից իրականացվող «Պատասխանատու ֆինանսական վարքագծի խթանում և բիզնես ակտիվության մեկնարկ գյուղական համայնքներում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է Տավուշի մարզի 4 գյուղական համայնքների 140 ֆերմերների և երիտասարդների շրջանում ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացումը, ինչը վերջիններիս կօգնի կայացնել գրագետ և կայուն ֆինանսական որոշումներ, ինչպես նաև կնպաստի ծրագրի մասնակիցների ձեռնարկատիրական գիտելիքների ու հմտությունների զարգացմանը: Բացի այդ, ծրագրի շրջանակներում մասնակիցներին մրցակցային հիմունքներով կտրամադրվեն դրամաշնորհներ ներկայացված լավագույն 20 բիզնես գաղափարների համար, որոնք կիրառործվեն Տավուշի մարզում, ներառյալ ծրագրի ակտիվ փուլի ավարտից հետո: Բիզնես ծրագրերը կնպաստեն շահառու համայնքների երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացմանն ու բարգավաճմանը:

*«Այսօր, առավել քան երբևէ, ճիշտ որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ է ունենալ ֆինանսական գիտելիքներ: Հպարտ ենք, որ համագործակցում ենք HSBC Հայաստանի հետ Տավուշի մարզի գյուղական համայնքներում սույն կարևոր նախաձեռնության իրականացման նպատակով», - ասաց ՀՕՖ-ի տնտեսական զարգացման ծրագրերի ղեկավար Էրիկ Բաղդասարյանը՝ միաժամանակ շեշտելով, որ համավարակով պայմանավորված՝ դասընթացները կանցկացվեն առցանց:*

*«HSBC-ն չափազանց կարևորում է համայնքների կայուն զարգացումը, որը հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման գրավականներից մեկը: Հայաստանում իր գործունեության մեկնարկից ի վեր HSBC Հայաստանն իրականացնում է համայնքային զարգացման բազմաթիվ ծրագրեր բանկի՝ ֆինանսական գրագիտության և ձեռնարկատիրական հմտությունների խթանմանն ուղղված ռազմավարության շրջանակներում: Ծրագրի արդյունքում ընտրված բիզնես գաղափարների իրականացումը կնպաստի շահառու համայնքների երկարատև և կայուն զարգացմանը աշխատատեղերի ստեղծման և տեղական արտադրության խթանման միջոցով», - նշեց HSBC Հայաստանի հանրային ծրագրերի համակարգող Նորա Նազարյանը:*

PUBLIC

\*\*\*

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 64 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2020թ. մարտի 31-ի դրությամբ կազմել են 2,918 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 362 աշխատակիցների միջոցով: 2020թ. -ի մարտի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 298 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկեր:

Հայ օգնության ֆոնդ

Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) բարեգործական կազմակերպություն է, որի գործունեության նպատակը հայաստանցիների համար խոստումնալից ապագա կառուցելն է: ՀՕՖ-ը ստեղծվել է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի նախաձեռնությամբ 1988-ի ավերիչ երկրաշարժից հետո: Պաշտոնապես գրանցվելով 1993 թվականի մարտին՝ ՀՕՖ-ը նախաձեռնել և իրականացրել է 350 միլոն դոլար արժողությամբ ավելի քան 290 մարդասիրական, սոցիալական, կրթական և մշակութային ծրագրեր: Ներկայում ՀՕՖ-ը ծրագրեր է իրականացնում մարդասիրական օգնության, հասարակական ու տնտեսական զարգացման, ինչպես նաև կրթական ու մասնագիտական առաջիադասման բնագավառներում:

«Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» ծրագիր

ՀՕՖ-ը շուրջ 10 տարի իր՝ «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» բազմաբաղադրիչ ծրագրի շրջանակներում իրականացնում է տարբեր նախաձեռնություններ Տավուշի մարզում՝ նպաստելով Բերդ համայնքի տնտեսական գործունեության աշխուժացմանը և մարդկային կապիտալի զարգացմանը: